

բարխային բերանները: Առանի բացուածքների մի քանին ցոյց են տալի չորսից մինչև հինգ մլոն տրամագիծ, և մեր ակնոցները մեզ նշմարել են տալիս նրանց այնպիսի կշռութեամբք, որ նոցա պարագաներիցը ոչ մէկը չի խոյս տալի մեզանից, մինչդեռ Տը Հիւմբոլդի ասելովն, լուսնիցը մեր հեռացոյցները հազիւ պիտի ծանաչել տային երկրային հրաբուխներն. քանի մի գաւառներն նորա մէջ այնքան ծակոտուած են, որ նոցա բերաններն կըսչում են իրար. երբ որ մարդ գանուի Ատնայի գագաթի վերայ, և նայուածքը թափանցի երեսուն կամ քառասուն հրաբխի վերայ, որոնք կան սիւսած հսկայի ծոցումը, կունենայ լուսնի գաւառներից մէկի պարզ տեսարանը: Աս ինքնին փորձն առի այս նմանութեան, որ կարծեմ ոչ մի աստղաբաշխ նշմարած լինի:

Բայց ընդհակառակն լուսինը սակաւ շղթայ լերանց ունի: Ալպեանն, Աովկասն, Ապենիուսն, գլխաւորներն են. նոցա ամենաբարձր գագաթի բարձրութիւնը չի անցնում բնաւ 7000 մեթրից. նշմարուում են նորա վերայ մասներ այնպիսի կէտերից, որ կարելի է նախադասել երկրախօսական բաղադրութիւնը, և մեր ակնոցները այնքան ձիշդ են, որ եթէ գտնուէին մեր մոլորակի վերայ քանի մի մեծ յիշատակարաններ, պիտի նշմարէին նրանց. հընումն լուսնի մակերևոյթի վերայ երևեցած սեւաւ միջոցը համարում էին ծովու նշանակ. բայց այս օրուան օրս ընդունում են նրանց ոչ այլ ինչ, բայց թէ լայնածաւալ դաշտավայրեր. առաջին աստղաբաշխերն նոցա տուած են բանաստեղծական անուններ. կայ Վոյլ Կաղաղութեան,

Վոյլ Ամպոց, Վոյլ Նիկտարի, Ովկիանոս մրբկաց, և Վոյլ Պարզութեան: Չրկուած մթնոլորտից և ջրից, լուսինը բնկղմուած է յաւերժական լուսութեան մէջ. — անշուշտ անսպաս մի է:

Թարգմանէց Գաղղիերէնէց
ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՒՐԱԿԵԱՆՑ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ.

«Ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանն իւր, ոչ կայցէ: Մատթ. Գլ. ԺԲ. նամար 23: Զուգութիւնն է մայր բարեաց, անզուգութիւնն ծրեօղ չարեաց: Եղիշէ:

Հայ ընթերցողներու շատին ծանօթ են մեր ազգի թշուառութեան և խեղճութեան աղբերակները: Բաժանումն և անզուգութիւնը յղացեր և ծներ են մեզ համար այն ամեն աղէտներ և խեղճութիւնները՝ որոց բնօրն տակ կըտքայ Հայն յուսարեկ. անզուգութիւնը իսկ մեր բերնէն մեր դիցադուն հարց քրտինքով մեզ համար վաստակած պատառը և ձգեց թշնամեաց բերանը. անզուգութիւնը մեր ազատ պարանոցէն կախ տուաւ այն քարերը՝ որ մեր ջլերը կտորատելով ու մեջքը բեկանելով՝ դիմներս մինչ ի գտին խոնարհ կորեցին: Այն ազատ գլխոյ երկնազէտ աչերն, որ սիրելի Հայաստանի գեղեցիկ կապտազոյն ծրի մէջ արձույ աչաց նման կը խաղային ցոլալով, այժմ անզուգութեան սերմանած դառնահոտ արմատներէն դուրս տուած կծուահոտութեամբն լի սրղտոր արտասուքով՝ հազիւ կը նշմարեն իրենց ազի կաթիլներով շարուած պատառիկ հացը:

Ժամանակ մը Հայ Հայի հետ կրկին ամրապինդ կապով էին կապուած՝ մարմնոյ շահերով և հոգոյ շահերով. եթէ հանդիպէր և վերջինիս մէջ անմիաբան լինէին, առաջինն սակայն նոցա ամուր կպած կը պահէր: Բայց ժամանակն՝ որ ամենայն Պորդեան հանդոյցներ կխզէ, խզից և Հա-

յի առաջին և զլիսուոր կապը, շորթեց նորա պիսէն արքայական թաշն՝ և իշխանութեան գաւազանը կորզեց ձեռքէն, քայքայեց լուծեց նորա նիւթական շահերն, և գանազան շահերով ու օրէնքներով կատարուեալ թուան իշխանութեանց լծոյ ներքեւ հարկեց գնել իւր պարանոցը, Հայն այնուհետեւ իւր համարիւն եղբոր հետ կրօնիւք և եթ մնաց կապուած, նոյն հաւատքը նոյն արարողութիւնքը, նոյն ծիսակատարութիւնքը և միասին օտոտախմբութիւնք կրնժացուցանէին նոյն մի և նոյն զգազմանց և ազգութեան որչոյ հոսանքը նոցա երաններու մէջ, նոյն մի կրօնից և մի և նոյն հոգեւոր գլխոյ թեոց հոխանուորութեան ներքեւ փնտուեց Հայն իւր կենաց ապահովութիւնը իրբեւ ազգ, և այդ հայրենաւանդ խարսխի վերայ հիմնեց նա իւր կայքը ժամանակի յախշտակիչ ու կանոնող պետաց դէմ մրցելու ազգաւ, ուստի և շատ անգամ յետ մղուեցան կորիկոր անաստ կոհակաց բունութիւնքնու Բայց ուր որ յայտնի զօրութիւնը Հայնն ընկճել չկարողացաւ, այն տեղ ծածուկ մեքենայութիւնքը և գաղանթորդայթ խորամանկութիւնը հնարեցան զրգուել նորան իւր խարսխի վերայ, և թէ և բընաւ երբէք չկարողացան զխտլին խախտել նորան յիւր կայցն, բայց իւրեանց ծածուկ տուած հարուածներովը յաջողեցին վէրք գնել նորա կողմն, և այն վերքը ճարակելու կամ գէթ անբոյժ մնալու հնարները եղան այնուհետեւ նոցա ճգանց կէտը:

Ինչպէս որ աստ մը իւր բնէն զիւաշուճ հողմեց կոծմանէն ջարդուած բաժանուած՝ խաղալիկ կլինի անհաշտ տարերաց ձեռքը, հողմը կկապուէ նորանէն սկրած տերևներն, օդը կը ծծէ նորա երակոց մէջէն կենդանական հիւթը՝ որոյ տեղ վերայ կհամի կը տիրէ հողոյ փտտութիւնը և հուակ հեղեղներու հանդիպելիս՝ կը քշեն կտանին զայն անյատակ անդնոց որկորը կը մատնեն, այնպէս և ազգութեան մը ամբողջութեանէն հատուած մաս մը, որ ոչ ինքն իրմէ է հատուած՝ այլ թըշնամեց որկրածէտ տապարին հանդիպած, զանազան հակառակասէր կրից և ատկութեանց ձեռքըն գերի մատնուած և զինքն հատանող անյագ փառամոլի ծանկերու մէջ բանուած, որ նորան

այս քով այն քով դարձնելով ու լսելով, սկորները բեկանելով կամ կակղելով, և ըստ իւր քուսը յարմարելով՝ հուսկ ուրիմն որպէս մտնուոր պատառ մը կուլ կուտայ իւր պորտոյ մէջ անյուշ անխշտակ:

Մեծ ձուկը փոքր ձկան կուլ կուտայ, այդպէս է մեծութեան և ուժեղութեան օրէնքը, վասն որոյ փոքր ձուկը պէտք է իւր սահմաններու մէջ ամուր կենայ և խորամուխ չլինի խորաջուր տեղուանք, ուր մեծամեծ ձկուներ կը լողան, որոց ինքքն դեռ ևս ոչ ուժով և ոչ ճարտար խորամանկութեամբ կարող է դէմ կենալ, Փոքրիկ և անտէր ազգ մի, որ կը ցանկայ իւր գոյութիւնը պահել, պիտի զիտնայ որ այդ գոյութիւնը իւր ամբողջութեամբ և բարոյական ուժոյ կենդանացմամբ միայն կրնայ պահուիլ, և նորա իւրաքանչիւր անհատը պէտք է ամուր բռնէ այն թիկէն՝ որ նորան իւր կեղբանին հետ կը կապէ, եթէ մի անգամ այդ թիկը փրժաւ իւր ձեռքէն՝ զիտնաթող որ կը շրջի կոնակի վերայ անկանգուն, անկանգուն՝ վասն զի կայնած են նորա ետեւ լայնաբաց աչերով և պատրաստ ճիրաններով նորա անկման պահ դնող անգեղները, որ խկոյն վրայ թափին և կենդանի կենդանի թաղին նորան:

Հայ եղբայրք, անբաժան քայլիւք, զոյգ ընթանանք, միարան մրցինք՝ փոքր ազգութիւններ՝ թէ մասամբ թէ ամբողջութեամբ՝ իւրեանց մեծակազմ տարերաց մէջ ընկուզանել ներսող ուժերու դէմ, եթէ չունինք հղօրի ուժը, ունենանք գէթ տկարի խորագիտութիւնը, և խոհեմ ու արթուն շրջահայեցութիւնը՝ մեր անձնականութիւնը անլթար պահելու համար: Սրոյ բերանը մեզ համար այժմ՝ չի կորէ, մեր ետութիւնը մեր ապահովութիւնը իւր մի Հայկական կրօնի մէջ կը գտնէ, մեր կրօնքը շուրանանք և չփոխենք ոչոց կրօնքի հետ, մեր հարց մեզ համար կատուցած սեղանի եղջիւրներէն ամուր կախ կենանք, անդ է մեր փրկութիւնը:

Նորա՝ որ մեզանից մի մասի իսկական անունը փոխիր և վերստին կնքելով կոչեր են Հայ-Պաթոլիկ, միւսին Հայ-ուղղափառ, երրորդին Հայ-նորադանդ, նոցա նպատակը մեզ լաւութիւն անին և մեզ ճշմարտութիւն ուսուցանելն է եղած:

նչ, բոլորդ կարող էք զիտնալ որ ոչ, իսկ նա դարձեալ կը կրկնեմ, ոչ, նոցա ամեն մէկի ցանկութիւնն այն է եղած՝ որ իւր բրբրուծը եղաւ, և այդու այն սնափառ պարծանքն ունենայ՝ թէ իւր բրբուծը ամենից եղաւն է կամ բնկերի բրբուծին հասասար եղաւ է:

Մի հարցնելք, թէ նորա որ մեզ մեր փարախէն դուրս են հաներ, ի՞նչ են ասել ու այդ արել նորա պատերը խորխուշ տեսած են անհաստատ հիմանց վերայ, թէ նորա օդն են աստաշունչ համարած Հաւատոյ էական հիմն և ճշմարտութեան անհաստակն Աստուած չէ Հայ կրօնքի խորխոսն, թէ նորա մեջ չի՞նն այդ յախտնական էակէն աղբերացած սկզբունքներն, թէ Աստուած սէր է, սիրեցէք զմիմեանս, զոր ոչ կամիս զի արասցին քեզ մարդիկ՝ և դու մի՛ տաներ նոցա. Ամենեքին եղբարք եմք: Մեր կը տեսնես թերին քու կրօնքիդ մեջ, ու՛ր Հայ, եթէ հասկացող ես (զի՛ առանց հասկանալու և առանց ինքն իրեն բրածին համար տալու՝ գործողն՝ առողջ մտաց և դատողութեան տէր չլինար համարուիլ) որ կօծաուիս կը բաժանուիս քու բնականից համարին եղբորէն, և գնաս կը յարիս ի հեռաւորն: Մի՞թէ, զոր օրինակ այն Աստինն, որ քեզ գէզի իրեն կը քաշէ տանի, չէ հասկացած մինչև այսօր կրօնքի ճշմարտութեանը որ կտերու վերայ հիմնուած լինելը. եթէ հասկացիտ է ու կը տանի, գիտցիր որ նորա միտքը քու հոգոյ՝ շահերը չեն, լու բաց աչքերդ Եսկ եթէ չէ հասկացած ու կձգէ զքեզ կտանի, գիտցիր որ թէ նա, որ զքեզ քու նախկին ճանապարհէդ կը դարձնէ, թէ դու, որ նորա ետեւն անբննողաբար կը խոտորիս կերթաս, երկուքդ ևս նախապաշարեալ էք և աչքերդ փակ. «Յորժամ կոյր կուրի առաջնորդէ՝ երկրին ևս ի խորխորատ անկանին»: Վա՛ մի՛ խրտիք եղբայր, ես խորխորատ ասելով, քեզ զժողբի դուռը ցոյց չեմ ուղիւ տալ, որչէ՛ն ի՛նչ ի՛նչ ի՛նչ ի՛նչ այլ իմ մտքովս այնքան է քու խորխորատ բնկերդ որ քու ազդութեանէդ կը զրոյս անագուցեմ մեջ, և երբ բնբանկու լինիս սխալֆ վախեմ որ արդէն ոչ լինի և այն կակճկի փոշմանութիւնը քեզ հասնի՝ ինչ հասաւ այն լու-

զորդ որականին՝ որ միտք բերնէն թողած ստուերին հասաւ բանկու, լափեց՝ բայց ցնդիկ իր

Լսէ իմ եղբայր, խօսքս աւելի քեզ կուղղեմ, ես ևս Հայ-կաթողիկ կոչուած հօրէ ու մօրէ ծընած եմ՝ քեզ պէս, իմ սիրտս աշխարհաց նազելի մայրաքաղաքին մեջ սնուցեր են Աթողիկներ իմ եղբայրներս, ու միտքս մշակեր են Աթողիկներ, բայց բնական լոյսս և ստացական գիտութիւնս փարատեցին իմ միտքիս և հոգոյս բոլորէն այն մտայններն, որովք կրօնից խորթացեալ վարդապետքն կատարժին պատել մեր միտքերը, և որոց մեջէն խորհրդական ձայնիւ պատգամ կուտան իրենց հօտին, որպէս Եսայայէի Աստուածն ի Մինայի ամպոց մեջէն: Գրաւ կուտը թողած կեղևները կը պճնազարդեն, ներքինը և էականը անտես արած՝ արտաքինով և աւելորդներով զակատուած են: Ես ոչ մի քրիստոսական կրօն չխոտելով, որն որ վերոյիշեալ գեղեցիկ ըսկզբունքներու վրայ է բարձրացած, կընտրեմ բիւրիցս դուռնալ մնալ այն կրօնի մեջ՝ զոր իմ հարքս են ինձ աւանդած, սրբազան ժառանգութիւն մը՝ որ իմ փառաւոր նախնեացս սեպհականութիւններէն սա միայն անրեկոր հասած է առիս, մանաւանդ որ նա է զիս իմ միւս յոգնաթիւ եղբարցս հետ շաղկապողն: Այն մօտ կէս միլիօնի ժողովուրդը՝ որ այդ շաղկապը բարձր է, ի՛նչ է փաստական, օտար հոգեւորականի ձեռք խաղալիկ եղած, նոցա փառամտութեան խայծ, և եթէ աւիրաւ իրաւազրկութիւնը ևս հասնի կրել ու ձայն բառնայ բողոքելու, բանազրանաց շանթերով այնուհետեւ կը կոծեն նորա նորա գլուխը:

Քանի՛ մենք այդպէս աշտիակ յառաջ վարուինք այդօրինակ գառնազգեստից ձեռքէն, թափենք անգամ մի մեր մտքէն նախապաշարմանց կեղեւները, տեսնենք լոյսը մեր մտաց աչքով, հերիք տեսնենք այլոց աչքով, մանաւանդ երբ այդ աչքերը մենք գիտենք պիժմ՝ որ ցաւով ու ճգուիւ վնասուած են: Թողունք ի բաց կրօնից հոգեւորատ փէճերը, գատարկ ժամափաճառ չլինելք փաւճ ու սին հարցերով, տածենք արժարձներ սէր ու միաբանութիւնը մեր ազգի մեջ, մշակենք մտքերը, ունձացնենք սրտերը ազգօգուտ ծիլերով, բառնանք ի միջոյ հերձուածոց և պառակտմանց

չարարոյս արմատները. բանանք մեր հոգւոյ դըրուելքը փտութեան զուարթարար լուսոյ առջև, թող ներս մտնէ և հաղածէ նորա խորշերու մէջէն նախապաշարմանց բազմադարեան խաւարը:

Յիշենք եղբարք, մեր մանկանց Արամազնեան նորարդորջ շառաւիղին, որ Հայկ, Արտաշէս Բ. և Ա. Բ. անհապուհ փառօք թագաւորեր են Հայոց վերայ. քաջութիւն, աշխարհաշէն բարգաւաճութիւն և գիտութիւնք գեղեցիկ դպրութեանց Հայի ճակատը յաղթական պատկերով պճնազարգած են: Մենք այն քաջաց զաւակներն ենք, նոցա գեղեցիկ ձրիցը ժառանգներ ենք. ունինք՝ բայց թաղած ենք: Սիրոյ և միութեան շունչն որ միանգամ փչէ՝ իսկոյն կը վերացնէ աճիւնը, և այն կենդանի ու աշխոյժ կայծերը աստղերի նման փայլ կարճակեն ցոլացմամբ: Օ՛ն սէր և միութիւն, եղբարք

Ո՞՞ Հայ - + - Բուհի:

Դ. ԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՆ.

Աշխարհի ստեղծման օրից մինչև ցայսօր մարդկութիւնն թէ և բազմատեսակ փոփոխութեանց, զանազան բնական ազդեցութեանց և քաղաքական ներգործութեանց ներքոյ ենթարկուած է, բայց դարձեալ իւր կենսական շրջանն կշարունակէ միշտ դէպ ի յառաջ: Մարդն բնութեան ամենապնիւ ստեղծուածն և ամենաքնքոյշ ծաղիկն զոլով՝ որքան արժանաւոր է նորան էական կոչում և նշանակութիւն, որքան սեպուհ և բարձր են նորա պարտականութիւնքն շրջահայեաց նրկատման, և քանի քանի խորհուրդներ և նշանաւոր կէտեր կըջապատեն նորա անօրեայ կենաց ընդարձակ ասպարէզը. — Երբ մարդմանկութեան փոփոխ հասակի մէջ իւր առաջին քայլը կգործէ աշխարհի վերայ, նորա մէջ ամենայն մի հոգեկան և բնական յատկութիւնք և ընդունակութիւնք կգտնուին արդէն իբրև երկրագործի նոր յերկիր ձգած սերմեր. նորա զարգացած չնն սկիզբն են միայն կարօտ արդէն մեծամեծ հոգատարութեանց և խնամոց, որպէս զի կարող լինին առողջ կեանք ունենալ և անվնաս կերպիւ բնութեան սուրբ պարգևների իսկ նպատակը ի-

րագործել դէպ ի ցանկալի հասունութեան կէտը ժամանելով. դաստիարակութիւնը միայն պիտի վճռէ այս, դաստիարակութիւնը միայն իբրև արևու կենսագործ լոյս՝ ներգործելով այն տեղ իւր թափանցիկ ուժը՝ պիտի հասուցանէ դայնս իւրեանց էական պայմանին և բնութեան վիճ նպատակին: Դաստիարակութիւնը պիտի սկսի օրօրոցի միջից, մարմնական զարգացման հետ պիտի զարգանան և մանկան ընդունակութիւնքն, մի մանուկ՝ շնայելով թէ ինչ վիճակի ազդեցութեանց տակ է սկսել իւր մատաղ կեանքի առաջին շրջանը, ամբողջ մարդկութեան մի մասն կոչուած է նա արդէն, և ի՞նչպէս արդեօք պիտի պատրաստուի նա բնութեան սուրբ ձեռնարկութիւնը չստապալելու, իւր իրական կոչմանը հասանելու, և միով բանիւ՝ իսկապէս մարդ լինելու յօգուս մարդկութեան. դաստիարակութիւնը միայն պիտի պարգևէ նորան այս, դաստիարակութիւնը միայն յաջող լուծումն և երջանիկ վախճան կխոստանայ այս հարցերին:

Նախապէս դաստիարակութիւնը մի մանկան վերայ սկսելու են նորա ծնողքը կատարելով իւրեանց ծնողական բարձր պարտականութիւնը, մեծ է նոցա պարտիքը դէպ ի իւրեանց որդին. մայրական գրկի մէջ ամենայն բարոյական սկզբունք կանոնաւոր կերպիւ պարտական են ծնողք մատաղ հոգւոյ մէջ տպաւորելու, պարտական են նորա բարոյական սկզբանց կաթով իւրեանց մանուկը բաւական խնամելուց զկնի սկսել և մտաւոր վարժութեան և զարգացման բարի սերմերով նորա քնքոյշ սիրտը մշակելու, և ահա բնութեան սուրբ սկիզբը դէպ ի իրական վախճան և նպատակ յառաջելու ուղիղ պողոտայի մէջ կգտնէ զինքն, և ահա մի մարդ ևս մարդկութեան օգտաբեր և ամենակարեւոր պայմաններով կսկսի զարգանալ և մարդկութեան ամենաբարձր և խորհրդաւոր բուրաստունի մէջ հասուէտ մի ծաղիկ դառնալու յոյս ընձայիլ:

Մի մանուկ նախ և յառաջ անական դաստիարակութիւն է շարունակելու. այս պայմանը ևս իւր նշանակութեանը հասանելու համար կպահանջէ ուսեալ մայրեր: Մի առաջին կարեւորութիւն է մարդկութեան այս քնքոյշ սեռի կրթու-